

գործեն, սա շատ ցանկալի երեւոյթ է ուսումնարանի մէջ: Յիշեցնումսմ, որ ուսումնարանի գլխաւոր նպատակն է երեխայոցն տալ բարոյական զարգացումն:

(Կ Ը Զ Բ Ի Դ Ի Կ Ե Լ)

Գ. Երզնկեանց:

ՊԱՏՐԱՍՏՈՒՈՂ ՍԵՐՆԳԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ:

Ա.

« Առողջ միտք առողջ մարմնոյ մէջ »: Այս մեծ ճշմարտութիւնը յընթացս շատ դարերի կրկնում են մարդիկ: Ոչ դք չի հակառակիլ, որ սա ունի խորը նշանակութիւն: Բայց և այնպէս մարդիկ այնչափ անհոգ են իրանց առողջութեան համար, որչափ դժուար թէ անհոգ լինին նոքա մի որ և է այլ բանում, ոչ մի բանի հետ նոքա այնքան վայր ի վերոյ ծանօթութիւն չունին, որքան այն պայմանների հետ, որոնցով պայմանաւորում է առողջութեան պահպանութիւնն: Նոքա կը զարմանային, եթէ որ մի կրթեալ մարդ չիմանար ոչ մի օտար լեզու, եթէ որ նա ծանօթ չլինէր պատմութեանը, տեղեկութիւն չունենար աշխարհագրութիւնից: Բայց ոչ դք և ո'չ մի ժամանակ չի զարմանում, եթէ այդ կրթեալ մարդը ոչ մի հասկացողութիւն չի ունենում առողջութեան մասին, եթէ նա չի հասկանում թէ առողջ լինելու համար ինչ պէտքէ անել: Ի հարկէ չը պէտքէ զարմանալ, որ խաւար և տգէտ դասակարգը թունաւորում է ինքեան բոլորոնք հացով, թթու կաղամբով, հոտած մրգեղէններով արեւցուցիչ թուփուփով և այլ այսպիսի բաներով:—Այս դասակարգը արդարանում է իւր ազխութեամբ և աղքատութեամբ: Զը պէտքէ զարմանալ որ դատարկապօրտ և անխոյժ երիտասարդութիւնը ոչնչացնում է իւր առողջութիւնը ազտեղի անառակութեանց և շուայտութեանց մէջ խանդարելով ստամոքսը ոտարէներով, շամպանեան գինիով, խեցեկտիններով, ու ժամպառ լինելով պարերում, գիշերային հեղձուցիչ խնջոյքներում և պարահանդէսներում:—Հասարակութեան այս մասը արդարացնում է իրան իւր խանդարեալ բնաւորութեամբ ու անմտութեամբ և հազիւ թէ արժէ խղճալ, որ նորա անգամները ժամանակից առաջ կմանեն գերեզման: Զը պէտքէ զարմանալ, որ դժբաղդ մայրը ճնշում է մանկան կազմուածքը խանձարութեամբ, որ նա սաստիկ օրօրելով վնասում է մանկան, կերակրում է նորան քաղցրաւէններով, թէ նա նիհարացնում է մանկան փաթածելով և անդադար սննկի մէջ պահելով նորան:—Այդ խեղճ մայրը վատ է դատարարակուած, մտածելու սովոր չէ և երբ որ նա հեկեկում է իւր հոգատարութեան անկարողութիւնից մահու մատնուած մանկան դիակի վերայ, այն ժամանակ մենք նայում ենք նորան լի կարեկցութեամբ: Բայց չի կարելի չը զարմանալ, չը դժգոհել, երբ ամբողջ խմբեր մարդոց մուտք գործելով հասարակութեան մէջ և ամբողջ սերունդի մարմնաւոր և մտաւոր զարգացման պահպանութիւնը իրանց համար

նշանաբան ընտրելով՝ ո՛չ միայն չեն իմանում մարդու առողջութիւնը պահպանելու բոլոր կարեւոր պայմանները, այլ մինչև անգամ չեն կամենում ճանաչել նոցա, և գիտակցարար այդ պայմաններին հակառակ են ընթանում։ Այդպիսի գէպքերում չես իմանում թէ ի՞նչի վերայ աւելի զարմանաս, մարդոց կամակոր բթամտութեան՝—թէ նոցա անխիղճ քարասրտութեան վերայ, և նոց այս կերպ էին վարվում մինչև այժմ՝ արեւմտեան եւրոպայի մանկավարժները, Նոքա հակառակ էին մանկավարժութեան բոլոր պահանջներին յանդգնարար մերժումէին այդ գիտութեան պահանջները, նոքա աշխատումէին հէնց այն անել, ինչ որ պատարակուէր նա, Առողջապահութեան դէմ գործած այս անմիտ թշնամութիւնը շատ և շատ միլիոնաւոր մարդոց կեանք վնասեցրեց՝ որք առանց էն էլ շատ էին ճնշուած իրանց ընտանեկան կենաց անմիտ և անկարգ կազմակերպութեամբ։ Գծքաղարար այս թշնամութիւնը միայն այժմ է սկսում թեթեւանալ, Միայն այժմ են լրսվում ձայների՝ մանկավարժութեան և բժշկականութեան—այդ երկու գիտութեանց իրակատար համաձայնութեան կարեւորութեան մասին։ Բայց ո՞րքան օգտուած կը լինէր մարդկային աղբը, եթէ որ այդ գիտակցութիւնը աւելի վաղ դարձէր։

Ահա թէ ի՞նչ է ասում գօկտօր Նախօրին մանկավարժութեան և առողջապահութեան կապի մասին.— բոլոր գիտութեանց մէջ կայ մի ընդհանուր կապ, նոցա բաժանումն հետեանք է միայն մարդկային մտքի սահմանափակութեան։ Աւրեմն սորանից հետեւումէ թէ որքան աւելի հիմնաւոր կերպով է զարգանում մի որ և է առանձին գիտութիւն, որքան աւելի է լայնանում նորա ծաւալը այնքան աւելի պարզ երևումէ նորա ներքին աղգակցութիւնը գիտութեան միւս բոլոր ճիւղերի հետ։ Գիտութեան զանազան ճիւղերի ներկայացուցիչները այս գէպքում բոլորովին անսպասելի կերպով հանդիպում են իրար մի և նոյն հողի վերայ, մեղադրումն միմեանց այլոց սեփականութիւն յափշտակելում և կռուի մէջ աշխատումն ստիպել յարգելու իրանց իրաւունքները։ Բայց սահմանորոշութեան վերայ եղած վէճը հասկացնումէ վերջապէս երկու հակառակ կողմերին, որ նոցա գիտութիւնները ունին մի ընդհանուր ծագումն, միակողմանիութեան անկարելիութիւնից երկու կուսակցութիւնները նորից միանումն և վերջ ի վերջոյ հնձում են յաղթութեան ոսկեայ պտուղներ։ Այսպէս վերջին տասն տարում — այս գրուած էր 1836 թուականին, — մենք հարդիսատես հղանք փաստաբանների և բժիշկների կատաղի բանակումին, վէճի առարկաներն էին կախեալ և անկախ լինելը որի համար և իւրաքանչիւր կողմը յայտնումէր իւր իրաւունքը, Թէև խաղաղութիւնը չը նայելով փրկիստիւնների մէջ ընկնելուն անսպասելի էր երևում, սակայն այնու ամենայնիւ խաղաղութիւնը վերականգնեց, որը և այժմս կարող է գործադրուել ձեռք բերած աւարի զննութեան համար։ Բայց հաղիւ թէ յաջողումէ բժշկականութեանը հանգստանալ այս պատերազմից, այս անգամ՝ նորան սպառնումէ մի նոր՝ աւելի վտանգաւոր պատերազմն։ Այս գէպքում բժիշկների թշնամիք հանդիսանում են ման-

կախարժները, Բայց որովհետեւ խօսքը երիտասարդութեան ապագայ դաստիարակութեան վերայ է, ուրեմն իւրաքանչիւր որ պարտական է ընդունել ի հարկէ՝ եթէ ոչ ներգործական, գոնէ կենդանի մասնակցութիւն այս պատերազմի մէջ։ Ամենից առաջ կ'սորձենք ցոյց տալ երկու կուսակցութեանց էլ զրութիւնը։ Մանկավարժութիւնն ու բժշկականութիւնը՝ եթէ նոցա չհամարենք պարզ փորձական զիտութիւններ՝— ունին մի ընդհանուր հիմունք։ Երկուսն էլ ծագումն մարդու բնութեան հետ համաձայն զարգացումը ճանաչելուց մարդու մտաւոր և ֆիզիքական տարերքների աստիճան առ աստիճան զարգացումը զննելուց։ Մարդկային զարգացման ընթացքի վերայ արտաբնական ազդելու կարելիութեամբ պայմանաւորվում է այս խմացութեանց և կեանքի մէջ սոցա գործադրութեան մեծակշիռ լինելը։ Բայց այս կամ այն միջոցների գործադրութեան եղանակը, միջոցների՝ որ պայմանաւորվում են մեր աչքի առաջ գտնուող յայտնի նրպատակով — տարրեր է բժիշկների և մանկավարժների հայեացքով։ Էնց այդ տարրերութեան մէջ մենք պէտքէ որոնենք զիտութեանց այդ երկու ճիւղերի միջնասահմանը։ Բժշկականութիւնը օգտվում է իւր խմացութիւններով մասամբ խոյս տալու համար, մասամբ հեռացնելու համար այն բոլոր պատահող արգելքները որք խանգարում են կանոնաւոր զարգացումն։ Նորա ձգտմանց նպատակն է մարդու մարմնաւոր և մտաւոր առողջութիւնը։ Իսկ մանկավարժութիւնը իւր խմացութիւններով աշխատում է հասցնել մանկան մտաւոր և ֆիզիքական տարերքները կարելի լիակատար հասունութեանը, նորա նպատակն է կեանքի համար պիտանացու ներդաշնակ զարգացումն։ Մինչդեռ վերջինը աշխատում է կրթութեանց և օրինակների օգնութեամբ իւր սանիկին զարգացման հասցնել՝ առաջինը ջան ի գործ է լինում՝ հեռացնել նորանից ամենատեսակ արգելքները։ Այս կերպով՝ երկուսի համար էլ շահաւէտ է բարեկամական խելացի փոխադարձ ներգործութիւնը։ Այսպէս պէտքէ լինին բժիշկների և դաստիարակների յարաբերութիւնները, սակայն բոլորովին այլ բան է երևում իրականութեան մէջ։ Բժիշկը մեծ մասամբ ուշադրութիւն չդարձնելով մարդու մտաւոր կեանքի վերայ, համարեա թէ միշտ ոյժ է տալիս միայն ֆիզիքական կողմին, բայց և այստեղ նորա գործունէութիւնն երևում է միայն այն ժամանակ, երբ կարեւորութիւն է զգացվում հեռացնել արդէն յայտնուած արգելքը, այսինքն է հիւանդութիւնը։ Գաստիարակը իւր կողմից՝ հոգս է տանում միմիայն մտաւոր զարգացման վերայ աշակերտի մարմինը յանձնվում է ինքն իրան, եթէ միայն նա հիւանդութեան պատճառով յանձնուած չի լինում՝ բժշկի խնամատարութեանը։ Իսկ ի՞նչպիսի հետեանքների է հասցնում այս միակողմանիութիւնը։ Զարգացման օրէնքները արհամարհելուց դժբաղդսպէս շատ պարզայայտ պատիժներ են յառաջ գալիս։ Պղտտոնը ուսումն և որոնումն միմեանց համանիշ բաներ համարելով և ուսումն յուշաբերութիւն միայն անուանելով՝ սորանով պարզ ուզում էր յայտնել այն միտքը, թէ դաստաւութեան ճշգրիտ նպատակն է զարթուցանել աշակերտի մէջ ինքնուրոյ-

նութիւնը, Գաստիարակը չի կարող մարդու մէջ մի որ և է բան ստեղծել. — սորանից է որ մտաւոր կերակրի համար մի նիւթ առաջարկելով շատ քիչ բան է ձեռք բերվում, փոքր օգուտ է ստացվում և ուրիշ կերպ չի կարող լինել, քանի որ աշակերտը ձեռք չէ բերում ինքնուրոյնաբար, և իրան աւանդուածը իւրացուցանելով չի դարձնում իւր համար իւր մի անկողողտելի սեփականութիւն, որպէս մարմին և արիւն, Բայց մանկավարժը ինչպէս կարող է սորանում համոզուել, երբ նա հենց մի և նոյն միջոցով դործ ունի 50—60 աշակերտների հետ, նա այդ չի կարող անել և այդ չեն էլ պահանջում նորանից, Ծնողաց մեծամասնութիւնը հարցաքննութիւնը միայն ունի աչքի առաջ, նորա կարծիքով լաւ ուսուցիչը իսկ նա է՝ ով որ աշակերտին աւելի շուտ է պատրաստում հարցաքննութեան համար, Այս պատճառով էլ ուսուցիչը պէտքէ դիմի հասարակաց միջոցին և ամենից առաջ աշակերտի բոլոր հոգեկան կարողութիւնները մէկ կողմը թողած՝ պէտքէ ուշադրութիւն դարձնի նորա յիշողութեան վերայ:

Ահա այսպէս՝ փոխանակ իսկական մանկավարժութեան՝ երևան է գալիս արհեստական մարդութիւն, որոյ տուած արդիւնքները լինում են շատ ցիւրեմական համարուած անձինք իրանց անգլի արած ծանօթութիւններով քի գլխներով, որք երևելով ծայրայեղ գիտնականներ և ծայրայեղ յիմարներ, անընդունակ են լինում մի որ և է դործնական աշխատանքի համար, Վաղուց չէ որ մի վաճառական ասումէր ինձ. « ևս որոշել եմ իմ որդուս ուսանող դարձնել, որովհետեւ նորա մտաւոր բնդունակութիւնը շատ սահմանափակ դրութեան մէջ է. իսկ այնտեղ (համալսարանում) պէտքէ միայն լաւ ջանասիրութիւն և յիշողութիւն ունենալ »: Մեր կրթութեան այդ պակասութիւնը գեղեցիկ կերպով քննեց Վեդելլինը: « Զկայ ոչինչ աւելի վնասակար, ասումէ նա, և ոչինչ բան մարդու յառաջադիմութեանը գործնական կեանքի մէջ չի արգելում այնպէս, ինչպէս առարկաների վերայօք եղած պատմութիւնները և այն՝ հիմնուած միայն առարկաների վերայ, միտքը բնունարուելով փառ կարգի բերուած փաստերի կուտակութեամբ, խառնելով նոցա միմեանց հետ՝ մի անանցանելի պարիսպ է կանգնում առարկաների անուանց և նոյն իսկ առարկաների մէջ, խօսքերի և նոցա նշանակութեան մէջ, կանոնների և նոցա լաւ գործադրութեան մէջ »: Յիշողութեան տակ շատ անգամ վարագուրուած պահվումէ անկրթութիւնը, նորա միակողմանի ջանքերը յառաջացնում են այն բոսակական գիտնականութիւնը, որը և, ի հարկէ, որոշ բոպէում բաւականութիւն է տալիս հարցաքննողների պահանջներին, բայց և որը ոչ մի կերպ ուսումնարանի նշանակութեանը և նորա նպատակին չի ծառայում, այսինքն է՝ տալ ապագայ դործունէութեան համար պիտանացու բնդանուր կրթութիւն, Զպէտքէ պակասեցնել և բժշկականութեան մեղքերը նորա առ մանկավարժութիւնն ունեցած յարաբերութեան վերաբերութեամբ: Մինչդեռ բժիշկները իրանց բժշկութեամբ պարապուած՝ շատ քիչ էին հոգ տանում երիտասարդութեան մտաւոր դարգացման վերայ, դպրոցը բոլորովին դուրս սողաց նոցա գործունէութեան շրջանից և ապա

կացոյց իւրեան ընդհանրի ամենատեսակ ներգործութիւնից:— Եթէ որ մարդկային ազգը, ասումէ Պեկարդը՝ ընդունակ է վերականգնելու, այն ժամանակ ի հարկէ դորա հնարը ամենից առաջ մենք պէտքէ որոնենք բրժշկականութեան մէջ: Բայց ի՞նչ արին արդեօք Պեկարտի օրերից մինչև հիմի բժշկականութեան որդիք՝ նորա յոյսերը իրագործելու համար, նոքա օգուտ քաղելով զարգացման օրգանական կանոնների գիտութեամբ, օգնութեան ձեռք չը կարկառեցին մանկավարժներին. նոքա անհոգատարութիւնից չը կարողացան հասնել այն նպատակին, որ կարելի լինէր ստանալ հոգևով և մարմնով ուժեղ և առողջ ապագայ սերունդ, ո՛չ, նոքա սահմանափակուցան դեղատոմսակներ գրելով և մասնաւոր դէպքերում, չարեաց առաջն առնելով, որին և կարելի էր հասնել միայն իրանց գործունէութեան աւելի լայն ասպարիզում: Մարմնաւոր կրթութեան վերայ ամենին ուշադրութիւն չը դարձնելը գերմանական գիմնազիոններում, մտաւոր կրթութեան վերայ մատների արանքից նայելը, այժման սերնդի թուլութիւնն ու հիւանդութիւնը, որ քանի գնում՝ այնքան աւելի շատանում է՝ բղիտում է մեծ մասամբ այդ աղբիւրից, և եթէ որ չարիքը առաւել, մեծ չափով չի զարգացել, մենք այդ պարտական ենք աւելի հանգամանքի բերմունքին, քան մեր սեփական գործունէութեանը, Յոյները, որք լաւ էին հասկացել մարմնայն և մտքի փոխադարձ ներգործութիւնը կայսերութեան և մասնաւոր կեանքի համար՝ այս երկու կողմերի ներդաշնակ զարգացումից էին միայն օգուտներ սպասում: Մարդուս մտաւոր գործունէութիւնը կախումն ունի նեղադային համակարգութեան մէջ պատահող կենսական պայմաններից, բայց նեղադը ծծումէ արեան միջից կենսատու նիւթը և կենսատու ջրը, իսկ արիւնը ըստ իւր կարգին՝ կարող է պահպանել իւր բուն բաղադրութիւնը միայն նպատակաւորմար մարմնական կրթութեամբ և կերակրով: Այդ իսկ պատճառով էլ մարմնամարդութիւնը հին յոյների համար ունէր մեծ նշանակութիւն, նա համարվումէր իրրե կրթութեան մի նշանաւոր ճիւղ, Պղատոնի խօսքերով, « ո՛չ նորա համար, որ նա տալիս էր իրիտառարդներին մարմնական մեծ յոյժ, այլ նորա համար, որ նա արիացնում էր հոգին, որովհետեւ մարմնամարդութիւնը ու երաժշտութիւնը կրթում և բարձրացնումն հոգին »: Նոյն ինքն տէրութիւնը այս մասին հոգումէր, ուսուցիչներ էր նշանակում և ամենայն տեղ խրախոյսներով և բնծանկրով աշխատումէր երիտասարդների մէջ եռանդ զարթեցնել: Բայց մարմնական կրթութեան արհեստը փոքր առ փոքր աչքից ընկաւ և անլայտացաւ յունական կրթութեան անկմամբ: Պորանից յետոյ մարմնամարդների արհեստը և միջին դարերի ասպետական նիզակախաղութիւնները նպատակի համար այնքան չէին ծառայում, մասամբ նոքա տարածվումէին միայն ազգի աննշան մասի վերայ, իսկ մասամբ էլ ծառայում էին աւելի ոչ մի բանի պիտանացու ատլէտների *)

(*) Այսպէս են կոչվում Բուստոտանում այն անձինք, որք մարմնամարդական կրթութիւնները իրանց համար արհեստ էին դարձրել: Ինչպէս էին օրինակ ըսումնացով կուուղները եւլն:

զարգացման քան թէ մարմնական կրթութեան համար, որի նպատակն է պահպանութիւնն առողջութեան, Գիտութեանց վերածննդութեան ժամանակ հին աշխարհի գիտութիւնները կրկին անգամ համարմունք ստացան. բայց մանկավարժութիւնը չը կարողացաւ դորանից մեծ օգուտ ստանալ. որովհետեւ երիտասարդութեան կրթութիւնը գտնվում էր կաթոլիկ վարդապետների անկողնային իրաւասութեան տակ. Այս վերջիններից մեր դպրոցները սովորեցին պախարակել մարմնամարդութիւնն և մտաց կրթութիւնը. հիմնուած լեզուների չոր ու ցամաք սովորեցնելու վերայ, Թէև Րէյլի, Ֆիխտէի և Իգէլինի պէս մի քանի համարմունք ունեցող մարդիկ շատ ազդու կերպով էին խօսում յեղափոխութեան կարեւորութեան մասին. թէև քանի մի փորձեր եղան ուսումնարաններ կառուցանելու համար, որք ինքնակատի պիտի ունենային և մարմնական զարգացումն, սակայն այս գեղեցիկ դործը չէր կարող ծաղկել, քանի որ նա ճնողաց կամքին էր թողուած. այս փորձերն անյաջող անցան. Այդ ժամանակ բժիշկները, հասարակական գործողները և դպրոցների ուսուցիչները սաստկապէս և շատ յաճախ դանդաղեցան էին յարուցանում ապագայ սերնդի ֆիզիքական և մտաւոր զարգացման անպիտանութեան վերայ. թէև այդ երեւոյթը կախումն ունէր ևս պատճառներից. բայց այսու ամենայնիւ ամեն կողմից ձգտում էին վերագրել այդ՝ մասամբ և դպրոցին, որ այնքան աւելի նշանակութիւն էր ստանում, որքան աւելի սաստիկ կերպով ժամանակի հոգին հակումն էր ցոյց տալիս դէպի ազգային կրթութեան հոգսերը:

Բայց երբեմն բաւական է մի մի ամենաանշան դարկ, որ մի որ և է սրդէն մի անգամ յարուցում նոր գաղափար ստանալու տալականիչ նշանակութիւն, այսպիսի դէպքերում բաւական է մի խօսք միայն՝ և վաղն արդէն ի կատար կածուի այն, ինչ որ երկար տարիների ընթացքում ցանկանում էին մարդիկ. Այս վիճակին ենթարկուեցաւ և մանկանց այն ժամանակուայ կրթութեան պակասութեանց վերայ իշխող գաղափարը. երբ որ գերմանական բժշկական լրագիրներից մինում 1836 թուականին երևեցաւ Աօրինդէրի յօդուածը որ ձգտում էր ցոյց տալ թէ պրուսացոց դպրոցների այն ժամանակուայ կազմութիւնը, ղեկավարացնում էր իրաւարացնում էր իրաւարարութեան ֆիզիքական կանոնաւոր դորգացումն և որ կազմումէ առողջութեան ընդհանուր անկման գլխաւոր պատճառներից մինը. Աօրինդէրը պահանջումէր պակասեցնել ուսանելի առարկաների թիւը, ուսման և տնային պարապմանց ժամերի թիւը, և առաջարկումէր մարմնամարզական վարժութիւնների թիւը շատացնել. Մինչև այժմ՝ այս օրինակ խորհրդատուութիւնքը առանց ուշադրութեան էին մնում, բայց հարկաւոր եղած ժամանակ հասարակութիւնը այնպէս էր նախապատրաստուած, որ չէր կարող չհետաքրքրուել այս հարցով. Իշխանութիւնները նոյնպէս նորա վերայ ուշադրութիւն դարձնելով հրամայեցին ուղարկել Աօրէնդէրի յօդուածի առանձին օրինակները մանկավարժներին և առաջարկեցին վերջիններին մտադրութեան առնուել յօդուածի հեղինակի կարծիքները. Ըստ երևութիւն՝ պէտք էր սպասել որ

մանկավարժները շնորհակալութեամբ կրնդունեն բժշկի խորհուրդները, նոքա գործունէութեան նշանաբանն է ապագայ սերնդի մտաւոր զարգացումն. բայց որովհետեւ մտաւոր զարգացումն լիապէս կախումն ունի մարմնական զարգացումից, ուրեմն նոքա չէին կարող ժխտել բժշկի ապացուցութիւնները որ ասումէր թէ կրթութեան ներկայ եղանակով մեռնումն և ապագայ սերնդի մարմնական կարողութիւնները, որ նշանակումէ թէ՛ մեռնումն և նորա մտաւոր կարողութիւնները, Ժխտել այդ՝ կնշանակէր անցնել իսկ և իսկ իւր նպատակի հակառակ կողմը։ Հենց այդպէս էլ պատահեցաւ. դերմանական մանկավարժները վիրաւորուեցան, որ «գործքների բարեկարգութիւնը և յատաճողիմութիւնը պահանջումեն այնպիսի անձինք, որք մանկավարժական աշխարհից դուրս են գտնւում» և աննշան ու ցած ինքնասիրութեան համար աւելի շուտ պատրաստ էին փչացնել հազարաւոր մանկունք, քան թէ լսել խելօք խորհուրդներին։

Ամեն կողմից յարձակումէին Լօրինդերի և ուրիշ շատ բժիշկների վերայ, որք համակրում և համաձայնում էին նորա կարծիքի հետ։ Մանկավարժները օրինաւոր կերպով չըկարողացան հերքել Լօրինդերի կարծիքները. նորա հասարակութեան դատաստանին առաջարկած փաստերը չըհերքուեցան ուրիշ հակառակ փաստերով։ Այս հանգամանքը պարզ ցոյց էր տալիս մանկավարժների անկարողութիւնն ու թուլութիւնը այդ վէճի մէջ։ Այդ թուլութիւնը աւելի պարզ կերպով երևումէր այն բանի մէջ, որ մանկավարժներից մի քանիսը սկսեցին հրապուրել բժիշկներին իրանց բանակուական յօդուածներում, Հրապուրումն շատ անգամ՝ պէտք է գալիս իրրեւ վերջին մի միջոց, որից՝ ինչպէս խելատուողը ծովի փրփուրից, բլունումէ բանակուաւի մէջ անարդար կուսակցութիւնը, Տեսնելով որ իւր անկումն անխուսափելի է, որ դժուար է արդարանալ սովորական տրամաբանական ճանապարհով, նա մտածումէր մի որևէ կողմնակի բռնելատելի գտնել։ Մանկավարժների յարձակումների մէջ յստիւմէին այսպիսի խօսքեր. թէ «այս բոլորը այնպիսի մարդոց ցնորքներ և տեսութիւններ են, որոնք չարիք են որոնում մինչև անգամ և այնտեղ, ուրտեղ չըկայ նա» թէ՛ «այս բոլորը հետևանք են նիւթականութեան, (sic!)», որ ենթադրումէ թէ մարմինը իշխումէ հոգու փերայ, և ոչ թէ ընդհակառակն, թէ՛ վերջապէս «այս բոլորը տարածումէ հասարակութեան մէջ վնասակար գաղափարներ և անբաւականութիւն»։ Թէ ինչքան անխղճութիւն և բթամտութիւն կար այստեղ — այդ ինքնըստինքեան պարզ է։ Վարելի՞ էր արդեօր հասարակ ճշմարտութիւնները անուանել ցնորքներ և տեսութիւններ, մինչդեռ նոքա արդիւնք են փորձերի և ապացուցված են թուանշաններով։ Վարելի՞ էր արդեօք նիւթականութեան մէջ մեղադրել նոքա, որք ասումէին, թէ մեռցնելով երեսայի մարմինը, մենք չենք կարող կեանքի համար պահպանել նորա հոգին, Վարելի՞ էր արդեօք խօսել այն գաղափարների վնասակարութեան մասին, որք ձգտում էին պահպանել ծնողաց համար առողջ զաւակներ և պակսեցնել այն զէպքերը, որոց շնորհիւ մինչև իրանց մահը

դպրոցի մէջ սովորող աշակերտներ կային: Գերմանական մանկավարժները չէին կարող այդ չքահասկանալ, բայց նորա կամենում էին պնդել, առաջ տանել իրանց դասատուութեան մեռեալ եղանակները, իրանց և ոչ մէկին պիտանացու չոր ու ցամաք բանասիրական դասերը, իրանց վանքային անշարժ, մեռցնող կարգապահութիւնը և իրանց բթացած, անպատասխան աշակերտներին: Եւ այսպէս բժիշկների բոլոր ջանքերն անօգուտ անցան: Գերմանական մանկավարժները էյի իրանց ասածն էին պնդում և ասում. « աւելի լաւ է երեխաները մեռնեն, քան մեծանան առանց այն գիտութեանց, որոց մենք հարկաւոր ենք համարում »: Այս գաղափարական պատերազմը հասարակ բան չէր, դա մահու և կեանքի պատերազմ էր: Ահա թէ ինչպէս նա շարունակութեամբ այդպէս սաստիկ կերպով, Գերմանական մանկավարժներին յաջողեց երկար ժամանակ իրանց կողմը պահել մանուկներին անհամար անպէտք բաներ սովորցնելու իրաւունքը ի վնաս բարձի թողի արած աւելի կարեւոր առարկաների: Բայց այս հանգամանքը չէր կարող մեռցնել արդէն մի անգամ զարթած գաղափարը՝ գերմանացւոց դպրոցների տիրապետող կազմութեան միանաւոր աղիւցցութեան ծաւալման մասին մանուկների առողջութեան վերայ: Այս գաղափարը աւելի ուժեղ կերպով մշակուեց և զարգացաւ ու վերջապէս ներկայ ժամանակիս դարձաւ անսխիւթելի ճշմարտութիւններից մինը, որի առաջ պարտական էին վերջապէս խոնարհիլ և ինքեանք մանկավարժները:—

(Երբեք—մէկէլ) .

Թարգ. Մ. Տէր Սարգսեանց:

ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԵՅՈՒԹԻՒՆԸ:

« Ազգութեան երաժշտական եղանակն . . . ընդհատուցեալ զարթուցանէ զմիտս ամենեցուն առ ի տենչումն շնորհին, բաժնի չիք ինչ որ զգամ մը յեղաշրջէ յորտիտ թիւիւ կամ ի տըրտմութիւն, սրտէս պրզոցն ժաշ, յորժամ որդէս պարտէ է՝ լիկիցի, վասն այնորիկ եւ եղեկացական աւանդութիւնն ընկալաւ զայն »:

Ներսէս Դամբաբեկ:

Երաժշտութիւնը՝ ժարգկային զգացմունքները կրթող, քնքշացնող և ազնուացնող ամենազօրեղ տարրերից մինն է, որի կանոնաւոր ուսումը դարերի ընթացքում հետզհետէ կատարելագործուելով, գրեթէ բոլոր լուսաւորեալ ազգերի մէջ ընդհանրացել և պահանջ է դարձել, և երաժիշտ հանճարների շնորհիւ, վերջին կատարելութեան և նրբութեանն է հասել, իսկ մեղանում իրրեւ մի նորութիւն, շատ սակաւները միայն նոր են սկսել սովորել: Երաժշտութեան ազդեցութիւնը այնքան դսւմ և բարձր է, և այն աստիճանի հզօր է, որ զգալի կերպով սաստիկ ներգործումէ ո՛չ միայն զանազան տե-